

6. Յայտնի է, որ գլխագրերն հնում, յատուկ անունների վերաբերմամբ, այն նշանակութիւնը հունէին ինչ որ այժմ, շնորհիւ այն հանդամանքի, որ հնում գոյութիւն ունէր պատիւը (~), որ, ինչպէս բառի իմաստն էլ է բնորոշում, բռնում էր մեր այժմեան գլխագրի տեղը: Այդ պատճառով էլ Հաւաքաւանիս ձեռագրում պատահում ենք գլխագրերի յաճախ, ըստ մեզ, անտեղի գործածութեան, օր. զ նախդիրը գլխագիր. մինչդեռ զին յաջորդող բուն յատուկ անունը գրուած է պարզ բոլորագրով: Մենք այս դէպքում ևս մնացինք հաւատարիմ, ի նկատի ունենալով, որ գլխագրերի արդի կիրառութիւնն եթէ մէկ կողմից արդիւնք է հետեւողութեան եւրոպական լեզուների, միւս կողմից շարունակութիւն է այնպիսի երկարատե տատանումների, որոնց ներկայացուցիչներից մէկն էլ գործիս ձեռագիրն է:

7. Ընթերցողի ուշադրութեան ենք յանձնում մի շարք բարբառային և աշխարհիկ լեզուի յատուկ ձևեր ու դարձուածներ, որոնց նշանակութիւնը, մանաւանդ ներկայ դէպքում, մեծ է նաև պատմական տեսակէտից, օր. էջ՝ 15 դոնեռ, յամէն=ամէն, 16 առեց, 17 ուսքա (պրսկ.—թրք.), 18 լէնֆ, ևն:

8. Ի նկատի ունենալով, որ ձեռագիրս ընդհանուր առմամբ ներկայացնում է մի անվաւեր նկարագրութիւն պատմական անձերի ու անցքերի, համեմատութեան համար հարկ համարեցինք կաթողիկոսների ժամանակագրական ցանկից յետոյ, որով վերջանում է իսկապէս բուն ձեռագիրը, չհաշուելով Ղազարի յիշատակարանը, անմիջապէս աւելացնել մի այլ ցանկ, իր ծանօթութիւններով միասին, որ վերցրել ենք Կ. Պօլսի 1909-ի Ընդարձակ օրացոյցից: Այդ ցանկը, արդիւնք առանձին խնամոտ ուսումնասիրութեան, աւելի է համապատասխանում իրական պատմութեան, որ պահուած է մասամբ Թովմա Արծրունու, մասամբ էլ զանազան ձեռագիր յիշատակարանների մէջը:

9. Ինչքան էլ մեր հրատարակութիւնը փոքր է ծաւալով, այնու ամենայնիւ նրա գործածութիւնն աւելի